

Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի սոցիալ-տնտեսական ներդրումը

Կազմվել է Լիդիան Ինթերնեյշնլ ընկերության
պատվերով



Մարտ, 2015թ.

Սույն հաշվետվությունը գնահատում է Լիդիան Ինթերնեյշնլ¹ ընկերության կողմից նախատեսվող Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) սոցիալ-տնտեսական ներդրումը Հայաստանի տնտեսության մեջ, ներառյալ՝ ՀՆԱ-ի, հարկային եկամուտների, արտահանումների և զբաղվածության վրա Ծրագրի ազդեցությունը: Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը ներառում է Ամուլսարում Տիգրանես, Արտավազդես և Էրատո հանքավայրերի արդյունահանում: Հանքի շահագործման 11 տարիների ընթացքում նախատեսվում է արդյունահանել 2,1 մլն. ունցիա ոսկի:

Վերլուծության արդյունքների համաձայն Ծրագիրը շոշափելի ազդեցություն կունենա թե ուղղակի և թե անուղղակի² տնտեսական գործունեության հետևանքով: Ամուլսարի հանքի ծրագրի առաջին երկու տարիների ընթացքում (2015-2017թթ.)³ նախատեսվում է կատարել շուրջ 426 մլն ԱՄՆ դոլարի կապիտալ ներդրում: Հանքի շահագործման ողջ ընթացքում պետական բյուջե վճարվող հարկերի ու ռոյալթիների (այդ թվում՝ աշխատակիցների եկամտահարկերի վճարները) միջոցով ուղղակի ներդրումը կկազմի մոտավորապես 488 մլն. ԱՄՆ դոլար, մինչդեռ տնտեսության այլ ոլորտներում հանքին առնչվող անուղղակի և այլ գործոններով պայմանավորված գործունեությունից ստացված հարկերը կկազմեն հավելյալ 156 մլն. ԱՄՆ դոլար: Ըստ կանխիկ հոսքերի կանխատեսման պլանի, շահագործման ողջ ընթացքում Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը Ընկերության և կապալառու ընկերությունների աշխատակիցներին կվճարի շուրջ 230 մլն. ԱՄՆ դոլար, այդ թվում՝ շինարարական

¹ Միացյալ Թագավորությունում գրանցված Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ ընկերությունը ոսկու հանքավայրեր շահագործող ընկերություն է: Ընկերության բաժնետոմսերը ցուցակված են Տորոնտոյի ֆոնդային բորսայում (TSX:LYD):

² «Ուղղակի հետևանքները» վերաբերում են անմիջապես Ծրագրի ստացված արդյունքներին, մինչդեռ «անուղղակի և այլ գործոններով պայմանավորված առաջացող հետևանքները» վերաբերում են Հայաստանի տնտեսության այլ ոլորտներում Ծրագրի գործողությունների հետևանքով ստացված արդյունքներին: Ընդհանուր առմամբ «անուղղակի ներդրում» եզրույթն օգտագործվում է ցույց տալու տնտեսական լրացուցիչ գործունեությունը, որն առաջանում է Ծրագրի կողմից ապրանքների և ծառայությունների գնումներից: Այլ գործոններով պայմանավորված «ներդրում» եզրույթը սովորաբար վերաբերում է Ծրագրի վճարած հարկերից ստացված՝ Կառավարության կողմից կատարվող ծախսերին, ինչպես նաև աշխատակցի (Ծրագրի աշխատակիցները և Ծրագրի հետ անմիջական առնչություն ունեցող բոլոր աշխատողները) վրա կատարվող ծախսերը:

³ Ըստ ժամանակացույցի, շինարարությունը մեկնարկելու է 2015թ. կեսերին և շարունակվելու է մինչև 2017թ. կեսերը՝ ընդհանուր երկու տարի: Թեև կանխիկ հոսքերի կանխատեսումները, որոնք ծառայում են որպես տեղեկատու տնտեսական ներդրումները հաշվարկելու համար, կատարվում են ըստ օրացուցային տարիների, շինարարական փուլի ներդրումները հաշվարկվում են ըստ 2015 և 2016 օրացուցային տարիների: Շինարարական փուլում ոչ մի նյութական փոփոխություն չի լինի՝ օրացուցային տարվա փոխարեն տարվա կես օգտագործելիս:

փուլում վճարվող աշխատավարձերը: Ծրագրի շինարարական փուլում մոտավորապես 1300 մարդ կապահովվի աշխատանքով, իսկ շահագործման փուլում՝ 770 մարդ: Բացի այդ, զգալի քանակությամբ աշխատատեղեր կստեղծվեն տնտեսության այլ ոլորտներում (մասնավորապես մատակարարման համակարգի և ծառայությունների, ինչպես նաև ՓՄՁ-ների զարգացման շնորհիվ):

Կոնկրետ ներդրումներն ու հաշվետվության արդյունքները, որոնք անհրաժեշտ է ընդգծել, ներառում են՝

- Ակնկալվում է, որ Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի ուղղակի ներդրումը Հայաստանի ՀՆԱ-ում տարեկան կկազմի 120 մլն. ԱՄՆ դոլար կամ ընդհանուր ՀՆԱ-ի 1% (հանքի շահագործման 11 տարիների ընթացքում միջինը⁴): Հանքարդյունաբերության ոլորտի դեպքում ՀՆԱ բազմապատկիչը 1.55 է (որից 1.00՝ ուղղակի ազդեցությունն է, 0.22-ը՝ անուղղակի ազդեցությունը, իսկ 0.33-ը՝ առաջացող ազդեցությունը), ինչը նշանակում է, որ տնտեսության ոլորտներում անուղղակի և այլ գործոններով պայմանավորված ավանդը տարեկան կկազմի հավելյալ 65 մլն. ԱՄՆ դոլար: Ընդհանուր (ուղղակի, անուղղակի և այլ գործոններով պայմանավորված, առաջացող) ավանդը ՀՆԱ-ում միջինը կկազմի մոտավորապես 185 մլն. ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 1,4%:
- Նախատեսվում է, որ Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը լինելու է Հայաստանում առաջին հինգ խոշոր հարկատու ընկերություններից մեկը՝ գոյացնելով տարեկան միջինը մոտավորապես 50 մլն. ԱՄՆ դոլարի հարկեր, և ևս 17 մլն. ԱՄՆ դոլարի հարկեր կգոյանան անուղղակի և այլ գործոններով պայմանավորված տնտեսական գործունեությունից: Ամփջապես Ծրագրից առաջացող ընդհանուր հարկերը անուղղակի և առաջացող հետևանքներով հանդերձ կկազմի երկրում հավաքվող ընդհանուր հարկերի 2.1%-ը:
- Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի արդյունքում տարեկան միջինը կարտահանվի 286 մլն. ԱՄՆ դոլարի ոսկի, որը կկազմի Հայաստանից արտահանման ընդհանուր ծավալների 6.5% (ապրանքների արտահանման 10%):
- Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի շինարարական փուլը տարեկան 120 մլն. ԱՄՆ դոլարով կավելացնի տնտեսության շինարարական ոլորտի արտադրողականությունը Երկու տարի շինարարության արդյունքում ՀՆԱ-ում տարեկան ներդրումը կկազմի 1,0% կամ 102 մլն. ԱՄՆ դոլար, որից 40 մլն. ԱՄՆ դոլարը պայմանավորված է անուղղակի և առաջացող հետևանքներով:

⁴ Ոսկու 1 ունցիան 1250 ԱՄՆ դոլար գնի հաշվարկվով

Կիրառվող մոդելի համաձայն՝ ՀՆԱ-ի բազմապատկիչը շինարարական ոլորտի համար հավասար է 1.70 (որից 1.00՝ ուղղակի ազդեցությունն է, 0.28-ը՝ անուղղակի ազդեցությունը, իսկ 0.42-ը՝ առաջացող ազդեցությունը)

- Ծրագիրը նախատեսում է ստեղծել համեմատաբար բարձր վճարվող և բարձր որակավորում ապահովող աշխատատեղեր, որտեղ աշխատակիցների 95%-ը լինելու են Հայաստանի քաղաքացիներ: Վճարվող սովորական աշխատավարձերը կլինեն հանքարդյունաբերության ոլորտում վճարվող մրցունակ աշխատավարձեր, ինչը Ծրագրին հնարավորություն կտա փորձառու մասնագետներ ներգրավել:
- Ամուլսարի ոսկու հանքի Ծրագրի շինարարության նպատակով առաջին երկու տարիներին կներգրավի 1300 աշխատող: Ծրագրի արդյունահանման կամ շահագործման 11 տարիների ընթացքում հանքում, մշակման հանգույցներում, լաբորատորիայում և վարչակազմում կստեղծվի շուրջ 770 աշխատատեղ: 2013թ. համեմատ հանքարդյունաբերությունում զբաղվածության աճը կազմում է գրեթե 10%: Աշխատանքի ընդունման քաղաքականության համաձայն, աշխատանքի ընդունելիս առաջնահերթություն տրվելու է Ծրագրի ազդակիր և շրջակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև Վայոց Ձորի և Սյունիքի մարզերից եկած մասնագետներին:
- Զբաղվածության բազմապատկիչը շահագործման փուլի դեպքում կլինի մոտավորապես 11, ինչը նշանակում է, որ 1 աշխատատեղը հանքում Ծրագրի շահագործման ընթացքում տնտեսության այլ ճյուղերում անուղղակի և առաջացող հետևանքների շնորհիվ կստեղծի 10 աշխատատեղ: Այսպիսով, շուրջ 3300 աշխատատեղ կստեղծվի Ծրագրի անուղղակի ազդեցությունների և ևս 4400 աշխատատեղ առաջացող ազդեցությունների արդյունքում: Շինարարական փուլի համար համապատասխան բազմապատկիչը կլինի մոտ 4.3:
- Երկարաժամկետ զբաղվածության հնարավորությունները ազդակիր՝ Գնդեվազ, Սարավան, Գորայք և Զերմուկ/Կեչուտ համայնքների համար ենթադրում են դրական ազդեցություններ արտագաղթը նվազեցնելու առումով: Սյունիքի մարզում իրականացրած տնտեսաչափական հետազոտությունները ցույց են տալիս, որ հանքարդյունաբերության ոլորտում զբաղվածության հնարավորություններն ըստ վիճակագրության էական ազդեցություն ունեն գյուղական համայնքներում արտագաղթի ծավալները կրճատելու վրա:
- Ամուլսարի երկարաժամկետ ֆինանսական ծրագրի համաձայն՝ Ծրագրի

գործունեության ընթացքում յուրաքանչյուր տարի համայնքներում կատարվելու են սոցիալական ներդրումներ, որոնք տարեկան կկազմեն մոտ 400 000-700 000 ԱՄՆ դոլար: